ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ. ԴԱՇԻՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԻՑ ԿՈԼԵԿՏԻՎ ԻՆՏԵՆՑԻՈՆԱԼՈՒԹՅՈՒՆ

ԱՐՇԱԿ ԲԱԼԱՅԱՆ

Քաղաքական իշխանություն

Իշխանությունն այլոց վարքի վրա ազդելու որոշակի կարողություն է: Լայն ընդունելություն գտած մի բնութագրության համաձայն՝ «Ա-ն Բ-ի նկատմամբ իշխանություն ունի այն չափով, որքանով որ կարող է Բ-ին մղել մի գործողության, որը նա հակառակ դեպքում չէր կատարի»[1]: Որոշ հեղինակներ սրան ավելացնում են նպատակադրությունը. իշխողը նպատակադրված է փոփոխում ենթարկվողի վարքը: Տարբեր ուսումնասիրողներ քննարկել են նաև այն հարցերը, թե՝

ա) Արդյո՞ք պարտադիր է, որ ենթարկվողն իր ցանկություններին և շահերին դեմ գնա: Ենթադրենք՝ Ա-ի միջամտությամբ Բ-ն ընտրում է մի գործողություն, որն իրականում բխում է հենց Բ-ի շահերից: Այս դեպքում նույնպե՞ս Ա-ն իշխանություն կիրառեց Բ-ի նկատմամբ:

բ) Արդյո՞ք այլոց վարքի ամեն մի փոփոխություն, անկախ կիրառված միջոցից, պետք է համարել իշխանության դրսևորում, թե՞ որոշ միջոցների կիրառությունը հարաբերությունը դարձնում է ոչ իշխանական: Օրինակ՝ Ա-ն կարող է Բ-ին ճշմարիտ տեղեկությունների հիման վրա կառուցված կանոնավոր կշռադատություններով համոզել, որ որոշակի քայլ կատարելը ճիշտ է: Արդյո՞ք այս՝ համոզելու դեպքում նույնպես իշխանություն է կիրառվում:

Սույն հոդվածի խնդրի վերլուծությունը չի պահանջում իշխանության առավել ճշգրիտ սահմանում: Այնուամենայնիվ նկատենք, որ այս և նմանատիպ մի շարք կոնկրետ հարցերին տրված պատասխանների շնորհիվ են առաջադրվել «իշխանություն» հասկացության բազմաթիվ սահմանումներ[2]:

Տարբեր սահմանումներ են տրվել նաև քաղաքական իշխանությանը: Ոմանց կարծիքով, քաղաքական իշխանությունը պետության կամ կառավարության միջոցով մարդկանց իշխելն է, այլոց համոզմամբ՝ հասարակության համար ծանրակշիռ տնտեսական, սոցիալական և

---

[1] **Dahl R.**, The Concept of Power, Behavioral Science, 1957, Vol. 2, Issue 3, p. 202-203, կամ **Searle J.**, Makring the Social World: The Structure of Human Civilization, Oxford University Press, Oxford, 2010, էջ 48 և այլն:

[2] Տե՛ս **Ледяев В.** Власть: Концептуальный анализ. М., 2001, էջ 25-58:

այլ գործընթացների վրա ազդեցությունը և այլն[3]: Անկախ քաղաքական իշխանության կոնկրետ սահմանումից՝ այն ենթադրում է քչերի իշխանություն շատերի նկատմամբ:

Ինչպե՞ս է հնարավոր քաղաքական իշխանությունը: Ինչպե՞ս է հնարավոր դառնում, որ մարդկանց ինչ-որ փոքրաթիվ խումբ կարողանում է իր կամքին ենթարկեցնել շատերին՝ հասարակության ճնշող մասին:

Հարցին տրվել են մի քանի պատասխաններ:

Բռնությամբ: Իշխողները թեև թվապես քիչ են, բայց ավելի կազմակերպված են, մարտունակ և բռնությամբ են իրենց ենթարկում մեծամասնությանը:

Կեղծ գիտակցության ձևավորմամբ: Հասարակության մեջ ինչ-ինչ գործընթացներով ձևավորվում են որոշակի համոզմունքներ, որոնք ձեռնտու են իշխող խավի ներկայացուցիչներին: Ենթարկվող խավը թեև թվապես գերազանցում է իշխողներին և ֆիզիկապես շատ ավելի զորեղ է, այնուհանդերձ ենթարկվում է, որովհետև հավատում է, որ իրերի դրվածքը տվյալ հասարակության մեջ արդար է կամ պարզապես ձեռնտու է իրեն:

Այս պատասխաններն ընդունելու դեպքում դժվարանում է (անհնար է դառնում) իշխանության բարոյական հիմնավորումը: Ո՛չ բռնությունը և ո՛չ էլ մանիպուլյացիան բարոյական չեն, և հետևաբար այս ռեսուրսների վրա հիմնված իշխանությունը օրինական չէ և պետք է վերացվի:

Վերոհիշյալ հարցին մեկ այլ պատասխան է տալիս **հասարակական դաշինքի տեսությունը**: Դաշինքի միջոցով հաճախ մեկնաբանում են և՛ հասարակության ծագումը, և՛ իշխանությանը ենթարկվելու բարոյական հիմքերը: Հասարակական դաշինքի տեսությունները միմյանցից տարբերվում են: Թ. Հոբսի և Ջ. Լոկի կարծիքով, մարդիկ պետություն են հաստատում (և հետևաբար քաղաքական իշխանություն են ստեղծում) հանուն իրենց ինքնապահպանման և բարեկեցության[4]: Ըստ այս տեսության՝ հասարակության անդամները փոխադարձ համաձայնությամբ են ձևավորում քաղաքական միություն: Եվ քանի որ համաձայնությամբ են միությունը ձևավորում, ըստ Թ. Հոբսի, նրանք այլևս բողոքելու հիմք չունեն: Ինչ վերաբերում է Ջ. Լոկին, ապա, նրա կարծիքով, քաղաքական համայնքում մարդիկ ոչ թե ենթարկվում են փոքրամասնության որոշումներին, այլ համաձայնում են ենթարկվել մեծամասնությանը և ըստ էության՝ մասնակցում են իշխանությանը[5]:

Դաշինքի տեսությունն այսօր ունի բազմաթիվ հետևորդներ: Այն մի շարք առումներով է գրավիչ: Այն, մասնավորապես հնարավորութ-

---

[3] Տե՛ս նույն տեղը, էջ 325-343:

[4] Տե՛ս **Гоббс Т.** Левиафан, или Материя. Форма и власть государства церковного и гражданского. М., 2001, էջ 116 և **Locke J.**, Second Treatise of Government, Hacket Publishing Company, Indianapolis, 1980, էջ 52:

[5] Տե՛ս նշվ. աշխ., էջ 53:

յուն է տալիս համոզիչ կերպով ցույց տալու, որ քաղաքական իշխանությունը կարող է լինել օրինական. կարող է միանգամայն բարոյական լինել և այլոց պարտադրել որոշակի գործողություններ, կենսակերպ:

Օրինականության դաշինքի տեսություն

Քաղաքական իշխանության օրինականության խնդիրը ծագում է մասնավորապես անհատների ազատությունները և ինքնավարությունը հարգելու կարևորությունից: Ըստ Ջ. Լոկի՝ բնական վիճակում ազատությունները վտանգված կլինեն, և այդ ազատությունները պահպանելու համար անհրաժեշտ են անկողմնակալ դատավորներ և ոստիկանություն: Հենց քաղաքական հասարակության ձևավորմամբ է հնարավոր լավագույնս պաշտպանել յուրաքանչյուր անձի ազատությունները, իսկ անհատների ազատությունները պաշտպանելը դաշինքի տեսության հիմնական նպատակն է:

Ըստ լոկյան դաշինքի տեսության՝ քաղաքական օրինականության անհրաժեշտ պայման է այն, որ ենթարկվողը համաձայնի լինել ենթակա[6]:

Այն, որ, ըստ Ջ. Լոկի, անձը պարտավոր է ենթարկվել պետությանը միայն այն դեպքում, երբ անձամբ է իրեն պարտավորեցնում (իր համաձայնությամբ) ենթարկվել պետության հրամաններին, Լոկի տեսության ամենագրավիչ, բայց և ամենախոցելի կողմերից է: Ստացվում է՝ քանի դեռ անձն իր համաձայնությունը չի տվել, նա պարտավորված չէ ենթարկվել նույնիսկ կատարելապես արդար պետության հրամաններին:

Պետությունն իրավունք ունի՞ պատժել մեկին, ով չի ենթարկվում իր արդար օրենքներին և հիմնավոր պահանջներին: Դաշինքի տեսությունը պնդում է, որ իրավունք չունի, քանի դեռ տվյալ անձը տվյալ քաղաքական համայնքին միանալու համաձայնություն չի տվել:

Ջ. Լոկը գիտակցում է, որ այս ձևով դաշինքի տեսությունը չափազանց պահանջկոտ է, և առաջարկում է լուռ համաձայնության (tacit consent) գաղափարը, ըստ որի՝ ինչ-որ պետության տարածքում ապրելը և երկրի բարիքներից օգտվելը համաձայնության դրսևորումներ են: Անձը կարիք չունի բացահայտ կերպով հայտարարելու պետությանը ենթարկվելու իր համաձայնությունը: Եթե նա չի լքում տվյալ երկրի տարածքը, ըստ Ջ. Լոկի, նա լուռ հայտնում է իր համաձայնությունը[7]:

Այնուամենայնիվ, լուռ համաձայնության տեսությունը նույնպես խնդրահարույց է: Դեռևս Դ. Հյումն է նկատել, որ ծննդավայր երկրից մեկնելը դժվար է. մարդիկ հաճախ պարտադրված են մնալ իրենց երկրում: Երկրից հեռանալ ցանկացող մարդն իր կամքին հակառակ նավում հայտնված անձի է նման: Նավն արդեն բաց ծովում է, և անձը պարտավոր է ենթարկվել նավապետի քմահաճույքներին. այլընտրան-

[6] Տե՛ս նույն տեղը, էջ 52:
[7] Տե՛ս նույն տեղը, էջ 64:

քը փոթորկահույզ ծովը նետվելն է[8]:

Լուռ համաձայնության տեսությունը նահանջ է լոկյան դաշինքի տեսությունից, որը կարևորում է անձի ինքնավարությունը և ազատությունը: Եթե անգամ պետությունն արդար է, և նրանից հեռանալը՝ բավականին դյուրին, միևնույնն է, անձը կարող է ինչ-ինչ անձնական նկատառումներով չտալ տվյալ երկրին ենթարկվելու իր համաձայնությունը: Նման դեպքում, ըստ դաշինքի տեսության, անձը պարտավոր չէ ենթարկվել պետությանը, այնինչ, ըստ լուռ համաձայնության տեսության, ճիշտ հակառակը՝ նա պարտավոր է ենթարկվել: Այսպիսով, Ջ. Լոկի դաշինքի տեսությունը և՛ թերի է (չի հիմնավորում իշխելու իրավունքը), և՛ պարունակում է ներքին հակասություն (դաշինքի և լուռ համաձայնության տեսությունները հակասում են իրար):

Դաշինքի տեսության մեկ այլ խնդիր է այն, որ անձի՝ ենթարկվելու համաձայնությունը միգուցե ո՛չ անհրաժեշտ և ո՛չ էլ բավարար պայման է իշխանության օրինականության համար:

Ջ. Լոկը կարծում էր, որ հասարակական դաշինքը պատմական փաստ է: Դաշինքի մեկ այլ տեսության հեղինակ Ի. Կանտը գտնում էր, որ դաշինքը ռացիոնալ մտակառույց է՝ բանականության գաղափար, որը «ամեն մի օրենսդրի հարկադրում է այնպիսի օրենքներ սահմանել, որոնք կարող էին բխել մի ողջ ժողովրդի միացյալ կամքից»[9]: Քանի որ նախնական դաշինքը բանականության գաղափար է, ապա այն համամարդկային է, և հետևաբար անձին կարելի է հարկադրաբար ենթարկեցնել այդ դաշինքին, գտնում էր Ի. Կանտը: Ավելին, սա տվյալ անձին իր ազատ կամքից չի զրկում, քանի որ կամքն ինքը բանականության արգասիք է[10]:

Ավելի պարզ ասած՝ Ի. Կանտի մշակած դաշինքի տեսության հիմքում այն գաղափարն է, որ եթե անգամ անձը համաձայնում է կատարել ինչ-որ անբարո արարք, ապա նրա համաձայնությունը պարտավորություններ չի ստեղծում: Նրա համար միանգամայն բարոյական կլինի հետագայում չանել այն, ինչ ըստ համաձայնության պիտի կատարեր: Նույն կերպ՝ այն դեպքերում, երբ ճիշտ էր համաձայնություն տալը, բայց անձը չի համաձայնել, նա, այնուամենայնիվ, կարող է ունենալ պարտականություններ՝ համաձայն բանականության կողմից մարդուն պարտադրված բարոյական օրենքի:

Այս տեսությունն անշուշտ հաղթահարում է լոկյան դաշինքի տեսության դժվարությունները. եթե պետությունն արդար սկզբունքներով է առաջնորդվում, անձի բարոյական պարտքն է ենթարկվել պետությանը, և անգամ եթե նա իր համաձայնությունը չի տվել, միանգամայն բարոյական է նրան ենթարկեցնելը, քանզի այս քայլը նրան չի զրկում

---

[8] Տե՛ս **Hume D.**, Selected Essays, Oxford University Press, Oxford, 1998, էջ 193:

[9] **Kant I.**, Practical Philosophy, Cambridge University Press, 1999, p. 296.

[10] Տե՛ս նույն տեղը, էջ 90:

իր կամքի ազատությունից:

Կանտյան դաշինքի տեսությունը, սակայն, նույնպես բախվում է լուռ համաձայնության տեսության վերոհիշյալ խնդրին. այն նահանջ է բուն համաձայնության տեսությունից. երբեմն մարդուն պարտադրում են ենթարկվել՝ առանց իր (բացահայտ) համաձայնությունը հաշվի առնելու:

Կոլեկտիվ դիտավորություն (ինտենցիոնալություն): Դաշինքի մի նոր տեսության հեղինակ է Ջ. Սեարլը: Նա գտնում է, որ քաղաքական իշխանությունը հնարավոր է շնորհիվ կոլեկտիվ ինտենցիոնալության: Նրա սոցիալ-փիլիսոփայական հայացքները արժանացել են մեծ ուշադրության, սակայն հայրենական փիլիսոփայության մեջ ոչ մի անգամ չեն քննարկվել: Այդ իսկ պատճառով նրա հայացքները փորձենք ներկայացնել առավել հանգամանալից:

Հասարակության և, մասնավորապես, քաղաքական իշխանության վերաբերյալ իր տեսակետը Ջ. Սեարլը կառուցում է գոյաբանական մի շարք դրույթների և մարդկային երեք կարողությունների՝ կոլեկտիվ դիտավորության, առարկաներին գործառույթներ վերագրելու և սահմանադիր (կոնստիտուտիվ) կանոններ կիրառելու կարողությունների վրա:

Նախ պետք է տարանջատել «օբյեկտիվ» և «սուբյեկտիվ» տերմինների գոյաբանական և իմացաբանական իմաստները: Իմացաբանական առումով օբյեկտիվ (սուբյեկտիվ) են այն դատողությունները, որոնց ճշմարիտ կամ սխալ լինելն անկախ (կախված) է մարդկանց վերաբերմունքից, կարծիքներից և այլն: Գոյաբանական առումով օբյեկտիվ (սուբյեկտիվ) են այն իրողությունները, որոնց լինել-չլինելը կախված չէ (է) սուբյեկտից, որոնք կարող են գոյություն ունենալ նույնիսկ երբ սուբյեկտ չկա: Այս տարբերակումը հնարավորություն է տալիս պարզորոշ տեսնելու, որ գոյաբանական առումով սուբյեկտիվ իրողությունների վերաբերյալ կարելի է ձեռք բերել իմացաբանական առումով օբյեկտիվ գիտելիք[11]:

Գոյաբանական առումով սուբյեկտիվ են ոչ միայն մարդկային ներաշխարհի իրադարձությունները, այլ նաև բոլոր ինստիտուցիոնալ փաստերը:

Գոյաբանական առումով սուբյեկտիվ են. մեզնից կախված են նաև նշանդրեքի արարողությունը, համալսարանական դասը, դատական նիստը և այլն[12]: Այն, որ ինչ-ինչ գործողությունների շարքը նշանդրեքի արարողություն է, ըստ Ջ. Սեարլի, օբյեկտիվ փաստ է, բայց միևնույն ժամանակ այդ գործողությունների շարքը կախված է մարդուց. կախված է ոչ միայն մարդկանց որոշակի վարքից, այլ նաև մարդկանց վե-

---

[11] Տե՛ս **Searle J.**, The Construction of Social Reality, The Free Press, New York, 1995, էջ 8:

[12] Տե՛ս **Searle J.**, Mind, Language and Society: Philosophy in the Real World, Basic Books, New York, 1998, էջ 14:

բաբերմունքից: Ինչ-ինչ գործողությունների շարք նշանդրեք է դառնում դիտորդի որոշակի վերաբերմունքի և համոզմունքների շնորհիվ:

Թեև հետաքրքրության զգացումը, նշանդրեքի արարողությունը և այլն պարունակում են գոյաբանական առումով սուբյեկտիվ տարրեր (ինտենցիոնալություն), դրանց վերաբերյալ կարելի է ձեռք բերել իմացաբանական առումով օբյեկտիվ գիտելիք[13]:

Անդրադառնանք վերոհիշյալ երեք կարողություններին, որոնք հնարավոր են դարձնում հասարակության և մասնավորապես քաղաքական իրականության կառուցարկումը:

Դրանցից առաջինը կոլեկտիվ ինտենցիոնալությունն է, որը Ջ. Սեարլը համարում է պարզ կենսաբանական կարողություն: Այն հնարավոր չէ հանգեցնել անհատական ինտենցիոնալության: Ավելին, հենց անհատական ինտենցիոնալությունն է բխում կոլեկտիվ ինտենցիոնալությունից[14]:

Հաջորդն առարկաներին որոշակի գործառույթ վերագրելու կարողությունն է: Երբեմն առարկաներին վերագրում են այնպիսի գործառույթներ, որոնք տվյալ առարկան իր զուտ ֆիզիկական հատկություններով իրագործել չի կարող: Այսպիսի գործառույթը Ջ. Սեարլն անվանում է «կարգավիճակային»: Առարկային, գործողությանը կարգավիճակային գործառույթ վերագրել նշանակում է այդ առարկան կիրառել այնպիսի նպատակներով, որոնք տվյալ առարկան չի կարող իրականացնել զուտ ֆիզիկական հատկությունների շնորհիվ[15]: Օրինակ՝ թղթի կտորը չի կարող իր զուտ ֆիզիկական հատկությունների շնորհիվ փոխանակվել, ենթադրենք, մի քանի պարկ սննդամթերքի հետ: Կամ, դպրոցական դասազանգն իր ֆիզիկական հատկությունների շնորհիվ չի կարող բազմաթիվ աշակերտների և ուսուցիչների հարկադրել, որ սկսեն կամ ավարտեն դասը:

Եվ վերջապես, երրորդ կարողությունը կարգավորող (ռեգուլյատիվ) և սահմանադիր (կոնստիտուտիվ) կանոնները կիրառելն է: Կարգավորող են այն կանոնները, որոնք կարգավորում են նախապես գոյություն ունեցող ինչ-ինչ գործընթաց, օրինակ՝ ճանապարհային երթևեկության կանոնները: Ի տարբերություն ռեգուլյատիվ կանոնների՝ սահմանադիր կանոններն ստեղծում են որոշակի գործընթաց, հնարավոր են դարձնում այդ գործընթացը: Սահմանադիր կանոնների դասական օրինակը շախմատի կանոններն են: Դրանք հնարավոր են դարձնում շախմատը: Շախմատ խաղալ նշանակում է հետևել այդ կանոններին[16]:

---

[13] Տե՛ս նույն տեղը, էջ 44, **նույնի՝** The Construction of Social Reality, էջ 10:

[14] Տե՛ս **Searle J.**, The Construction of Social Reality, էջ 23-24:

[15] Տե՛ս **Searle J.**, Making the Social World: The Structure of Human Civilization, Oxford University Press, Oxford, 2010, էջ 59:

[16] Տե՛ս **Searle J.**, Freedom and Neurobiology: Reflections on Free Will, Language and Political Power, Columbia University Press, New York, 2007, էջ 88, և **նույնի՝** Mind, Language and Society, էջ 123:

Սահմանադիր կանոններն ունեն հետևյալ տրամաբանական կառուցվածքը. «Տվյալ համատեքստում (Հ) Ա-ն համարվում է Բ»[17]: Օրինակ՝ շախմատում (Հ) խաղաքարերի որոշակի դասավորություն (Ա) համարվում է հաղթանակ (Բ): Կամ՝ որոշակի իրավիճակում (Հ) «ես ձեզ հայտարարում եմ ամուսիններ» արտահայտությունը (Ա) համարվում է իրավական առումով ամրագրել երկու անձանց կապը (Բ) և այլն:

Սահմանադիր կանոնների միջոցով մենք առարկաներին վերագրում ենք կարգավիճակային գործառույթ: Վանդակավոր տախտակի վրա փայտե իրերի դասավորությունն ինքնին դեռ հաղթանակ չէ: Շնորհիվ «Հ-ում Ա-ն համարվում է Բ» կանոնի՝ որոշակի իրավիճակում այն համարում ենք հաղթանակ: «Շախմատային խաղի հաղթողը» կարգավիճակ է, որը մենք որոշակի կանոնով վերագրում ենք այս կամ այն անձին:

Կարգավիճակային գործառույթներ վերագրելով՝ մենք ստեղծում ենք լեզու, իսկ լեզվի միջոցով՝ հասարակական իրականություն: Բոլոր կարգավիճակները՝ դասախոս, վարչապետ, Ազգային ժողովի պատգամավոր և այլն, մենք ստեղծում ենք վերոհիշյալ կանոնի միջոցով:

Ջ. Սեարլը սոցիալական փաստ է համարում այն ամենը, ինչ ստեղծվել է կոլեկտիվ ինտենցիոնալության շնորհիվ[18]: Սոցիալական փաստեր կարող են ստեղծել ինչպես մարդիկ, այնպես էլ կենդանիները: Մարդիկ, սոցիալական փաստեր ձևավորելուց բացի, կառուցում են նաև ինստիտուցիոնալ փաստեր՝ դառնալով սեփականատեր, ձևավորելով կառավարություններ, դրամ, բանակ, ծննդյան օրվա երեկույթ և այլն[19]:

Սոցիալական և ինստիտուցիոնալ փաստերի հիմնական տարբերությունն այն է, որ ինստիտուցիոնալ փաստերը ստեղծվում են մարդկանց կողմից սահմանադիր կանոնների համատեղ կիրառության շնորհիվ, երբ ինչ-ինչ իրողությունների կոլեկտիվ կերպով վերագրվում է կարգավիճակային գործառույթ[20]:

Ինստիտուցիոնալ փաստերը գոյություն ունեն միայն և միայն շնորհիվ այն բանի, որ ընդունվում են որպես այդպիսին: Տղամարդու և կնոջ միությունը, ըստ այս տեսակետի, միայն այն դեպքում կարելի է համարել ամուսնություն, երբ «այն ընդունվում է որպես այդպիսին»: Մարդկանց որոշակի խումբ կառավարություն է միայն այն պարագայում, եթե ընդունվում է որպես կառավարություն և այլն:

Ինստիտուցիոնալ փաստեր մենք ստեղծում ենք վերոհիշյալ սահմանադիր կանոնը բազմակրկնությամբ և փոխկապակցված ձևերով բազմաթիվ անգամներ գործածելով: Սահմանադիր կանոնների՝ բազմակրկնություններով և փոխկապակցված ձևով կիրառությունը, ըստ Ջ. Սեարլի, բացատրում է ինստիտուցիոնալ փաստերի «դիմացկունութ-

[17] **Searle J.**, Mind, Language and Society, p. 124.
[18] Տե՛ս նույն տեղը, էջ 121:
[19] Տե՛ս նույն տեղը:
[20] Տե՛ս **Searle J.**, Freedom and Neurobiology, էջ 89:

յունը» և մեզ վրա նրանց ունեցած մեծ ազդեցությունը[21]:

Ինչպե՞ս է, օրինակ, ստեղծվում ամուսնության ինստիտուցիոնալ փաստը: Մենք նախ ստեղծում ենք լեզու. որոշակի բառերի վերագրում ենք կարգավիճակային գործառույթ. իմաստ ենք հաղորդում որոշակի ձայների: Այնուհետև նույն տրամաբանական կառուցվածքն ունեցող կանոնով ինչ-որ ձևով, նպատակով կառուցված (Հ) որոշակի շենք (Ա) համարում ենք եկեղեցի (Բ): Ինչ-որ իրավիճակում (Հ) որոշակի անձի կատարած ինչ-ինչ գործողություններ (Ա) համարում ենք քահանայի ձեռնադրություն (Բ), և այլն, և այլն: Վերջապես, քահանայի ներկայությամբ, եկեղեցու խորանի մոտ լեզվի օգնությամբ խոստում ենք տալիս (օրինակ՝ «տեր եմ», «հնազանդ եմ»): Ունենք մի կանոն. «Եկեղեցում, կոնկրետ պայմաններում (Հ), քահանայի արտասանած՝ «Ինձ տրված իշխանությամբ ձեզ հայտարարում եմ ամուսիններ» (Ա) բառերը ձևավորում են (համարվում է) ամուսնություն (Բ)»: Այս օրինակը ցույց է տալիս, որ ինստիտուցիոնալ փաստերի հիմք համարվող սահմանադիր կանոնները կիրառվում են բազմաթիվ անգամ կրկնվելով և փոխկապակցված ձևով:

Ինստիտուցիոնալ փաստերը կամ ինստիտուտները մեզ ընձեռում են որոշակի հնարավորություններ և/կամ մեզնից պահանջում են ինչ-ինչ գործողություններ: Օրինակ՝ սեփականության ինստիտուտը հնարավություն է տալիս տիրելու այդ սեփականությանը անգամ այն դեպքում, երբ մենք հեռու ենք[22]:

Ինստիտուցիոնալ կառույցները գործող սուբյեկտներին տալիս են որոշակի գործողություններ կատարելու հիմքեր՝ պարտականություններ՝ ձևավորելու իշխանություն՝ պարտականությունների, լիազորությունների, արտոնությունների, թույլտվությունների տեսքով[23]: Իշխանության այս տեսակի առանձնահատկությունն այն է, որ ստեղծում է որոշակի կերպով վարվելու այնպիսի հիմքեր, որոնք անկախ են անձի ցանկություններից: Նմանատիպ իշխանության էական հատկություններից մեկն այն է, որ նրա միջոցով, անկախ հնազանդվողի ցանկությունից, կարելի է նրան ենթարկեցնել հրամանին առանց ուժ կիրառելու[24]:

Նկարագրված ձևով՝ կոլեկտիվ ինտենցիոնալության միջոցով ինստիտուտներ ձևավորելու գործընթացն իր գագաթնակետին է հասնում քաղաքական ինստիտուտներ և մասնավորապես կառավարություն ձևավորելով: Կառավարությունը հասարակության գերագույն ինստիտուցիոնալ կառույցն է[25]: Ըստ Ջ. Սեարլի՝ կառավարությունը հրամայելու իրավունք ունի, ունի պարտականություններ ձևավորելու կարո-

---

[21] Տե՛ս **Searle J.**, Mind, Language, and Society, էջ 129-130:
[22] Տե՛ս **Searle J.**, Freedom and Neurobiology, էջ 33:
[23] Տե՛ս նույն տեղը, էջ 34:
[24] Տե՛ս **Searle J.**, Making the Social World: The Structure of Human Civilization, էջ 147:
[25] Տե՛ս նույն տեղը, էջ 162:

ղություն, քանի որ կոլեկտիվ ինտենցիոնալության (կոլեկտիվ ընդունելության, կոլեկտիվ ճանաչման) շնորհիվ է ձևավորվել: Այն ի հայտ է եկել ոչ թե անհատների համաձայնությամբ կամ առանձին մարդկանց «անհատական ճանաչումների» համադրմամբ, այլ հենց կոլեկտիվ ինտենցիոնալության շնորհիվ:

Որքանո՞վ է Ջ. Սեարլի տեսությունն ընդունելի: Նրա տեսության «ուժեղ» կողմերից մեկը, թերևս, սքողված անորոշությունն է, ինչն առաջ է բերում լրացուցիչ ճշգրտումներ հայցող բազմաթիվ հարցեր: Օրինակ՝ Ջ. Սեարլը խոսում է այն մասին, որ ինստիտուցիոնալ փաստեր ձևավորվում են «կոլեկտիվ ինտենցիոնալության», «կոլեկտիվ ընդունելության» միջոցով: Հարկ է նկատել, որ Ջ. Սեարլի կոլեկտիվ ինտենցիոնալությունը խիստ տարօրինակ մի իրողություն է: Նա հստակ նշում է, որ այդ կոլեկտիվ ինտենցիոնալության կրողն անհատն է, ոչ թե ինչ-որ կոլեկտիվ: Չկա որևէ վերանձնային գիտակցություն: Այդ ինտենցիոնալությունը կոլեկտիվ է ձևի առումով: Անհատը ձևավորում է ոչ թե «ես ընդունում եմ», այլ «մենք ընդունում ենք» ձևի ինտենցիոնալություն[26]: Ավելին, Ջ. Սեարլը ոչ մի տեղ հստակ չի ներկայացնում, թե ինչ է այս կոլեկտիվ ընդունելությունը: Պարզ չէ, թե արդյոք բոլորը պետք է ընդունեն այս կամ այն դրույթի (օրինակ՝ «Նա վարչապետն է») ճշմարտությունը: Հասարակության ո՞ր մասը պետք է հավատա, որպեսզի տվյալ ինստիտուցիոնալ փաստը հաստատվի և գոյատևի ժամանակի ընթացքում: Կոլեկտիվ ընդունումը ներառում է միայն հավատա՞լը, թե՞ այն ներառում է նաև պատրաստակամություն՝ կիրառելու բացասական սանկցիաներ նրանց նկատմամբ, ովքեր չեն ընդունում:

Թեև Ջ. Սեարլը պնդում է, որ պետության իշխանության հիմքը կոլեկտիվ ընդունելությունն է, բայց գտնում է, որ առանց ռազմական և ռազմական իշխանության չկա ո՛չ կառավարություն և ո՛չ էլ քաղաքական իշխանություն[27]: Ընդունելի է այն պնդումը, որ առանց ռազմական ու բանակի պետություն և կառավարություն չեն կարող լինել, սակայն անհասկանալի է, թե ինչու է բռնությունն անհրաժեշտ համարում մեկը, ով գտնում է, որ «քաղաքական իշխանությունն ամբողջովին կարգավիճակային գործառույթների հարց է, և այդ իսկ պատճառով ողջ քաղաքական իշխանությունը պարտականություններ ձևավորելու իշխանություն է»[28]:

Նա քաղաքական իշխանությունը տարանջատում և հակադրում է ռազմական, ռազմական հարկադրանքին և բիրտ ֆիզիկական ուժին՝ պնդելով, որ երբ մի երկիր գրավում է մեկ այլ երկիր, ապա «զավթողի և գրավյալ երկրի բնակիչների միջև հարաբերությունները քաղաքական չեն այնքան ժամանակ, քանի դեռ բնակիչները չեն ընդունել և չեն ճանաչել զավթողի կողմից առաջարկված կարգավիճակային գոր-

[26] Տե՛ս **Searle J.**, Mind, Language, and Society, էջ 119:
[27] Տե՛ս **Searle J.**, Freedom and Neurbiology, էջ 97:
[28] **Searle J.**, Making the Social World, p. 164.

ծառույթների ճիշտ լինելը»[29]:

Քաղաքական և օրինական իշխանությունները հաճախ են նույնականացնում, սակայն սա անթույլատրելի է, քանի որ այս տրամաբանությամբ մտածելով՝ միգուցե հանգենք այն տեսակետին, որ, օրինակ, Պինոչետը քաղաքական իշխանություն չուներ Չիլիում, իսկ Ստալինը՝ ԽՍՀՄ-ում: Թեև Ի. Ստալինի իշխանությունը հիմնված էր ոստիկանության ու բանակի վրա և ամենևին էլ լոկ պարտականություններ ձևավորելու իշխանություն չէր, սակայն կասկածից վեր է այն, որ նա ուներ քաղաքական իշխանություն:

Ի դեպ, ժամանակակից շատ հեղինակներ են «իշխանություն» բառն այնպես օգտագործում, որ հնարավոր է դառնում ոչ լեգիտիմ իշխանությունը: Օրինակ, Ստիվեն Լուկասը ընդունում է, որ իշխանությունը ներառում է նախընտրությունների ձևավորում, օրակարգի ձևավորում՝ ինստիտուցիոնալ կողմնապահության հաստատում և այլն[30]:

Միգուցե ոմանք առարկեն, թե լայն զանգվածների նկատմամբ Ի. Ստալինի իշխանությունը թեև հիմնված չէր ազատորեն ձևավորված կոլեկտիվ ընդունելության վրա, բայց նեղ շրջապատում նա, անկասկած, ուներ նվիրյալների մի փոքրաթիվ բանակ, որն ապահովում էր իր իշխանությունը: Թեև հնարավոր է, որ պատմական իրողությունը հենց այսպիսին է եղել, բայց սա ամենևին էլ միակ հնարավոր տարբերակը չէ: Իշխանությունը, թվում է, հնարավոր է անգամ այն դեպքում, երբ ոչ ոք չի ընդունում կառավարությունը կամ, ինչպես Ջ. Սեարլն է պնդում, «կարգավիճակային գործառույթի վերագրման ճիշտ լինելը»: Այս հանգամանքը պարզորոշ ցույց է տվել Մ. Պոլանին: Նա Ի. Ստալինի հատկապես վերջին տարիների իշխանությունը հետևյալ կերպ է մեկնաբանում: Այդ տարիներին ոչ ոք չէր վստահում որևէ մեկին, վախենում էր, որ Ի. Ստալինի նկատմամբ անհավատարմությունը կամ նրան ծառայելու հարցում թերացումն անմիջապես կմատնվի, և այդ իսկ պատճառով շարունակում էր ծառայել: Ավելին, ստորադասների՝ միմյանց չվստահելը հնարավորություն չէր տալիս, որպեսզի համատեղ ջանքերով կազմակերպեին հեղաշրջում: Կառավարություն ձևավորելու և ժամանակի ընթացքում գոյատևելու այս մոդելը ցույց է տալիս, որ կառավարության կոլեկտիվ ընդունելությունը հասարակության ձևավորման և գոյատևման համար անհրաժեշտ չէ[31]:

Վերջապես, պատմական փորձը ցույց է տալիս, որ հասարակության համար էական նշանակություն ունեցող հարցերում սահմանադիր կանոններն էական նշանակություն չունեն: Ջ. Սեարլը հասարակութ-

---

[29] **Searle J.**, Freedom and Neurobiology, p. 98.

[30] Տե՛ս **Lukes S.**, Power: A Radical View, London, British Sociological Association, 1974, էջ 14, 21 և 24:

[31] Տե՛ս **Polanyi M.**, Personal Knowledge: Towards Post-Critical Philosophy, Roudledge, London, 1962, էջ 238-239:

յան մեջ սահմանադիր կանոնների կարևորությունն ընդգծելու նպատակով դրամը համարում է հենց այսպիսի կանոնների գործածությամբ ձևավորված իրողություն[32]: Սակայն պատմությունը հուշում է, որ դրամի գործածության, արտադրության և այլնի վերաբերյալ կանոններն ավելի շուտ կարգավորող են, քան սահմանադիր[33]: Առհասարակ, հասարակության համար էական, կենսական գործառույթ ունեցող կանոններն ավելի շատ կարգավորող են, իրական, սոցիալ-պատմական զարգացում ունեցող շահերի արտահայտություններ են, քան՝ սահմանադիր:

Բանալի բառեր – *իշխանություն, օրինականություն, դաշինք, կոլեկտիվ ինտենցիոնալություն*

АРШАК БАЛАЯН – ***Легитимность политической власти: от теории договора до коллективной интенциональности.*** – В статье рассматриваются попытки обосновать легитимность политической власти с помощью теории договора. Эта теория привлекательна тем, что, как поначалу представляется, позволяет обосновать, что власть легитимна. В её разновидностях, однако, содержится ряд изъянов. Если теория Дж. Локка внутренне противоречива и страдает индивидуализмом, то теории молчаливого согласия, а также контракта (И. Кант) угрожают свободе индивида. Взамен идеи договора Дж. Сёрл выдвигает идею коллективной интенциональности, утверждая, что к согласию по созданию общества и правительства приходят не индивиды, а их совокупность, осознавшая институциональные факты. Основные положения, выдвинутые Дж. Сёрлом, не слишком убедительны, более того, некоторые из них несовместимы с историческими фактами.

Ключевые слова: *власть, легитимность, договор, коллективная интенциональность*

ARSHAK BALAYAN – ***Legitimacy of Political Power. From Contract Theory to Collective Intentionality.*** – Attempts to justify the legitimacy of political power through contract theory are discussed in this article. Contract theory is attractive as it seems to enable to justify the legitimacy of political power. However, it has a number of shortcomings. J. Locke's theory is problematic for its contradictions and unjustified individualism. The theory of tacit consent and I. Kant's contract theory, on the other hand, threaten the individual freedom. J. Searle replaces the idea of "contract" with that of "collective intentionality". He claims that it is not that individuals agree to establish a society and government; rather many individuals collectively accept the existence of institutional facts. J. Searle's central theses are vague. Moreover, many of his claims are incompatible with historical facts.

Key Words: *Power, legitimacy, contract, collective intentionality*

---

[32] Տե՛ս **Searle J.**, Freedom and Neurobiology, էջ 82:

[33] Տե՛ս **Smith A.**, An Inquiry into the Nature and Causes of Wealth of Nations, Harriman House, Patersfield, 2007, էջ15-19: